ՏԱՆՁԱՏԱՓ

Գտնվում է Տաթևի վանքի արևելյան կողմում և բաժանված է նրանից անդնդախոր ձորով։

*Այս գյուղի անունը 906 թ., երբ, ըստ Ստ. Օրբելյանի, Սյունյաց գահերից իշխան Աշոտը նվիրում է այն Տաթևի վանքին.— «Շնորհէ և զՅուր բերդո

95. ՏԱՆՁԱՏԱՓ գյուղից հյուսիս «Սվարանցի խաչ» կոչված վայրում, անտաշ քարերով շինված թաղակապ եկեղեցու բեմի բարձրության քիվին. 1 տող.

— —ՀԱՅՐԹԱԴԷՈՍՇԻՆՈՂՄԲԵԿԵՂԵՑԻՅՍՅԻՇԵՑԷՔԻՔՍ

ՌԵՍ՝ ՀԱՅՐ ԹԱԴԷՈՍ ՇԻՆՈՂ ՄԲ ԵԿԵՂԵՑԻ[Յ]Ս ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ։

96. ՏԱՆՁԱՏԱՓ գյուղից հյուսիս, «Սվարանցի խաչ» վայրում անտաշ քարերով շինված թաղակապ եկեղեցու բեմի ներքևի ճակատին. Նախորդի անմիջական տակը. 4 տող.

- - -ՊԽՋԿԱՄԻԱՄԵՆԱԿԱԼԻՆԱՅԵՍԳՐԻԳՈՐՎՐԴԳՆԵՑԻՋՀՈՒՆ
ԵՐՈՋԱՂԱՑԻՀԱԼԱԼԱՐԴԵԱՆՑԻՄՈՑԵՒԵՏՈՒԸՆԾԱ
ՄԲԱԾԱԾՆԻՍԵՒՋՑՈՒՐԱՀՈՂՆԱՐԴՈՐՔԽԼԵԼԵՒՀԱՆԵԼ
ՋԱՆԱՆՄԵՐՄԵՂԱՑՆՊԱՐՏԱԿԱՆԼԻՆԻՆԵՒԴԱՏԻՆՅԱՅ

Ի ԹՎ՝ ։ ՊԽՋ ։ ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ ԳՐԻԳՈՐ Վ[ԱՐ]Դ[Ա]ՊԵՏ՝, ԳՆԵՑԻ ՋՀՈՒՆ,ԵՐՈ ՋԱՂԱՑ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ ԵՒ ԵՏՈՒ ԸՆԾԱ | ՄԲ ԱԾԱԾՆԻՍ. ԵՒ ՋՑՈՒՐԱ ՀՈՂՆ, ԱՐԴ ՈՐՔ ԽԼԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ | ՋԱՆԱՆ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՆԻՆ ԵՒ ԴԱՏԻՆ ՅԱՅ։

ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) ԳՅՈՒՂ ԵՎ ԲՂԵՆՈ ԳԱՎԱՌԻ

ՆՈՐԱՎԱՆՔ

Այժմյան Բարձրավան գյուղը գտնվում է Գորիսի շրջանում, այն տեղավորված է Որոտան գետի աջ ափին. անդնդախոր ձորի գլխին բարձրացած քարափի վրայի հարթավայրում։ Հնում գյուղն ու իր շրջակայքը մտել են երբեմն Հաբանդ գավառի մեջ և երբեմն կազմել առանձին գավառ—Բղենո գավառ, հավանաբար այդ շրջանում գտնվող Սյունիքի նշանավոր ու անառիկ բերդերից մեկի՝ Բղեն բերդի անունով։

Գյուղի հնագույն անունը հայտնի չէ, միայն վերջին դարերից է հիշատակված Երիցաթումբ անունը, որը վերջին տարիներում վերանվանվել է Բարձրավան։

Բարձրավան գյուղի սահմաններում այժմ կան հետևյալ հուշարձանները.

1. Գյուղամիջի եկեղեցի. *վերակառուցված է 19-րդ դարում. սրա կտուրին կանգնեցված է մի այլ տեղից վերցրած խաչքար՝ 14-րդ դարի արձանագրությամբ։*

2. «Քրատակի ս. Մինաս» *եկեղեցի. գտնվում է դեպի Որոտան իջնող ձորալանջին, մոտ երկու կիլոմետր գյուղից հեռու։ Եկեղեցին շինված է կոփածո քարերով և թաղակապ է. միայն ներսից, բեմի կամարը սրբատաշ քարերով է շինված։*

Եկեղեցու բակում կան մի քանի խաչքարեր և ժայռաբեկորներ, որոնցից մի քանիսի վրա կան արձանագրություններ։

3. «Բղենո գավառի Նորավանք». *հուշարձանների խումբ. գտնվում է գյուղից դեպի արևելք՝ 3—4 կիլոմետր հեռու, Շունուխ տանող ճանապարհի մեջտեղում, ճանապարհից ձախ*